

Լոռութեամբ իմն դիտէր վեհ . Հայրապետ զամենայն ամբաստանութիւնս զոմանց քահանայից եւ զպաշտօնէից եկեղեցեաց , զանդամոց թեմ . Ատենի , զատենապարէ եւ զքարտուղարաց դիւանատան , քննէր խնամով զինողիլս ժողովրդեան եւ զաղերսազիցս , եւ անօրինէր զարժանն , յանձնեալ թեմակալ - Առաջնորդի կամ թողեալ յանձնել Սինոդի ի ներկայութեան իւրում գալ կարդաղրել զկարեւոր վը-ճիռս կամ զրացառութիւնս :

Տեղային եւ անստորագիր ամբաստանութիւնք , եւ յաճախութիւնք զրպարտութեանց եւ ստութեանց կորուսանէին զարժէս ոմանց արդարացի դիտողութեանց , թէպէտ յաջողէին գէթ ըստ մասնեայ պղտորել զմիտս նախապաշարմամբ , եւ ազգել զկասկածանս :

Յաւուր կիւրակէի Ծաղկազարդի (յ9-ն Ապրիլի) էջ նորին Սըրբութիւն ի Ս . Եկեղեցի վանաց ի ճաշու — ի Ս . Պատարագի , որ առանձին յառաւոտեան ժամերգութենէ կատարէր ըստ հնոյ եւ իսկական սովորութեան Հայաստանեաց յԵկեղեցիս Հայոց ի Ռուսաստան , մինչ կից ընդ առաւոտեան ժամերգութեան կատարի ճաշու ժամ եւ Ս . Պատարագ ի թուրքիա :

Ոչ բաւէին Ս . Աստուածածնի եկեղեցի եւ գաւիթ վանուց խուռն բաղմութեան ժողովրդեան եւ այսպէս շարունակէր խոնէր յառաւոտս եւ յերեկոյի յԱւագ Աւրբաթու , ի Զատիկի եւ ի կիւրակէի Ս . Յարութեան մինչեւ մեկնեցաւ նորին Սըրբութիւն ի Թիֆլիդէ :

Որոշեալ էր տալ ի նմին աւուր զպաշտօնական զառաջին այցելութիւն Հայրապետական առ Միքայէլ մեծ դուքս Նիկոլայեվիչ փոխարքայ Կովկասու , եւ եղեւ այսպէս :

Մերձ ի կէսօր եկն պետական պատուիրակ զօրապետ Վասիլի Զինովիէլ ի վեհարան՝ բերեալ դիտիսարքայական կառս ի պատիւ Ս . Հայրապետի : Նորին Վեհափառութիւն , նստեալ ի նոյն կառս ընդ Զինովիէլ զօրապետի , ոնաց ի պարատն փոխարքայական : Հայրապետական դրօշակիք եւ դրօշակակիր վեղաբաւորք յառաջէին , նստեալ յերիվարս , որպէս եւ շաթիրք յառաջընթացք : Իսկ Տ . Մակար եւ Սարգիս Արքեսիսկոպոսունք , Յովհաննէս Եպիսկոպոս . Շշտունի , վարդապետքն Պետրոս Տէր - Ստեփանեան (Վեհապետեան) , Յովհաննէս Սէթեան , Սիմէոն Սէֆէրեան , Խորէն Գալֆայեան , Ստեփան Սանտալնեան , Գրիգոր Մուշեղեան եւ Մուքիսս Պարզեան , աւագ քահանայր ոմանք , պարոնայք Մաղաք Մաղաքեան եւ Յակոբիկ Նէվրուդեան հետեւէին Հոգեւոր Տեառն նստեալ ի կառս :

Ի հասանել նորին Սըրբութեան ի դուռն պալատան պաշտօնեայք նշանաւորք դիմաւորեցին եւ առաջնորդեցին Հոգեւոր Տեառն ի մեծ

սրահն ընդունելութեան պալատան, ուր յոտնկայս համախմբեալ էին ի միալար գիծ շուրջանակի Հայ, Ռուս, Վրացի եւ Մահմէղական պաշտօնեայք առաջնակարգ եթէ քաղաքականք և եթէ զինուորականք՝ զարդարեալ այլ եւ այլ չքանչանօք եւ համազգեստիւք պաշտօնականօք: Ի ճակատու երկարութեան սրահին եւ ի հարաւակողմն երկրորդ դրան մերձ յանկիւն կախեալ կայր զորմէ մեծադիր եւ չքեղազարդ պատկեր Աղեքսանդր Բ. Կայսեր Նիկոլայեվիչի, եւ յերկուս կողմանս կենդանագրի էին սեղանք երկու, յաջակողմեանն ետեալ էին հրովարտակ վաւերացման Կաթուղիկոսութեան եւ չքանչանն Աղեքսանդր Նելացւոյ ընդ կայսերական հրովարտակին:

Ի մտանել Հոգեւոր Տեառն ընդ հետեւորդացն ի մեծ սրահն ընդ սովորական դուռն արեւմտեան եմուտ եւ Միքայէլ մեծ իշխան փոխարքայ պաշտօնական համահանդերձիւք եւ չքանչանօք ի սրահ անդր ընդ դուռն հարաւային, եւ դիմաւորեցին զիրեար:

Յողջունել Նորին Սրբութեան զիոխարքայն Միքայէլ, նա խոնարհեալ համբուրեաց զս. Այն Հայրապետական: \*)

Յետ փոքու միջոցի վոխադարձ ներկայացմանց, չնորհաւորեալ փոխարքայի զկաթուղիկոսական պաշտօն, զշքանչան Աղեքսանդրի հանդերձ բարեմաղթութեամբք, իբր ի դիմաց կայսեր առեալ ի սեղանոյ զհրովարտակն կաթուղիկոսութեան եւ զշքանչան Աղեքսանդրի Նելացւոյ՝ յանձնեաց Վեհ. Հայրապետի, եւ այսպէս աւարտեցաւ այս արարողութիւն:

Զինի այսր հրաւիրեալ տարաւ Մեծ Դուքս զՀոգեւոր Տէր յառանձին ընդունարան իւր, եցոյց զյարգանս արժանաւորս եւ զհիւրասիրութիւն: Խօսեցան ընդ միմեանս իբր ժամ մի, սակս ճանապարհորդութեան եւ յաղագս դրից Թիֆլիզու եւ կողմանցն, վեր ի վերոյ բանիւք: Յորդամ կամէր մեկնել Նորին Սրբութիւն, ինդրեաց Մեծ Իշխան Փոխարքայ եւ տարաւ զՀոգեւոր Տէր առ Օլկա իշխանուհի տիկին իւր, որպէսզի օրհնեսցէ զնա եւ զզաւակունսն: Զոր եւ կատարեալ վերադարձաւ Վեհ. Հայրապետ ընդ հետեւորդացն եւ ընդ հրաւիրակ Զինովիէվ զօրապետի վոխարքայական կառօք ի վեհարան ի վանսն:

Դնեմք աստ մի զկնի միոյ զպատճէնս հրովարտակացն կայսերա-

\*) Ըստ ուստական սովորութեան խաչակնեաց Հոգեւոր Տէր ի վերայ Փոխարքայի եւ ի վերայ բարձրաստինան պաշտօնէից՝ համբուրելով եւ գնակասու ի համբուրելն նոցա զԱզ Նորին Սրբութեան:

կանաց որ վասն կաթուղիկոսութեան եւ սակս չքանչանի Աղեքսանէրի  
Նելացւոյ (Նէվսքւոյ) :

### ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

« Արագահաս Ողորմութեամբն Աստուծոյ  
« Մենք Աղեքսանդր Երկրորդ:

« Կայսր եւ ինքնակալ ամենայն Ռուսաց, Մոսկուայ, Քիչվի,  
« Վլադիմիրայ, Նովկուրոդի, Արքայ Ղազանու, Արքայ Աստէրխա-  
« նայ, Արքայ Լեհաստանի, Արքայ Սիսկրիոյ, Արքայ Քէրսոնէսի  
« եւ Տավրիկիոյ, Արքայ Վրաստանի, թագաւոր Պակովու եւ Մեծ իշ-  
« խան Սմոլենսկայ, Լիդովսկայ, Վոլինսկի, Փողոլսկի եւ Ֆինլան-  
« դիոյ, իշխան Էսթլանտիոյ, Քուրլանտիոյ եւ Սեմիոեչսկի, Պելոս-  
« տոկայ, Քարելսկայ, Տվերսկայ, Խոկորսկայ, Փերմսկայ, Քատը-  
« կայ, Պուլզարաց եւ այլոց, թագաւոր եւ Մեծ իշխան Նովակորստի,  
« Նիչովեան Երկրի, Զեննիքովայ, Բիազանու, Փոլոդսկայ, Քոն-  
« դիյմկայ, Վիթեպսկայ, Մոտիսլաւայ, եւ Համայն Հիւսիսային կող-  
« մանց Հրամանատու, եւ թագաւոր Խոկրիոյ, Քարթալինի, եւ Քա-  
« ղարտիոյ եւ Նահանգին Հայոց (Երեւանայ), Զերքէղաց եւ լեռնա-  
« կան իշխանաց եւ այլոց, ժառանդական թագաւոր եւ Տիրող, ժա-  
« ռանդ Նորվեկիոյ, Դուքս Շլէզվիկ - Հոլշթէյնի, Սբարմատնայի  
« Անթմարսենայ եւ Օլտենապուրկի, եւ այլն, եւ այլն, եւ այլն:

« Յարդ լիցի Համօրէն Ազգի Հայաստանեայց, զի լուեալ զմիա-  
« հաւան ցանկութիւն, զոր յայտ արար նա հանդիսաբար ի Սբ. Էջ-  
« միածին յեօթներորդի \* ) անդ աւուր ամսեանն Սեպտեմբերի ներ-  
« կայ այսր ամի Հազարերորդի ութհարիւրերորդի վաթսուներորդի  
« վեցերորդի, հաստատեմք միք յաստիճան անդ Պատրիարքութեան  
« սրբոյ իջմիածնի եւ Կաթուղիկոսութեան Ամենայն Հայոց զնախկին  
« Պատրիարքն Կոստանդնուպոլսոյ եւ զԱրքեպիսկոպոսն Պրուսայու  
« զՃէր ԳէՈՐԳ:

« Ամենաբարձրեալն Աստուած օրհնեսցէ զՄայրագոյն Պա-  
« տրիարքն ի պաշտօն ծառայութեան, որ մեծ է առաջի Տեառն, առ  
« ի բարօրութիւն եւ ի փրկութիւն Համօրէն Հայկազանց սիրեցելոցն  
« առ ի մէնջ:

« Տուաւ յաթուանիստ քաղաքն մեծ Փեթերպուրկ, յամի Տիառն

\* ) Պարտի լինել 17, երես ոչ իցէ սխալ քարգմանչի: Մոռացեալ եմք նշուի ըստ  
իսկականի:

« 1866, ի քսաներորդի երրորդի աւուր ամսեանն Նոյեմբերի, որ ամ  
« երկոտասաներորդ է մերումս թագաւորութեան :

### ԱՂԵՔՍԱՆԴՐ

« Նախարար ներքին գործոց Սթաթու — Սեքրետար Վալուելվ» :

Իսպառ նորօրինակ եւ եղական է չքեղազարդ ձեռանկար շրջա-  
դիծ հրովարտակիս այսորիկ, յորում գծագրեալ են հայկական նշանք,  
Մասիս, էջմիածին, Ս. Առաքեալքն եւ առաջին լուսաւորիչք Թաղէոս  
եւ Բարթուղիմէոս, Ս. Գրիգոր երկրորդ Լուսաւորիչ Հայաստանեայց,  
Ս. Հայրապետն Սահակ եւ Ս. Մեսրովս Առաջին թարգմանիչք՝ ի  
ոռուսական ձեւս եւ ի նկարս եթէ ըստ կերպարանաց, եթէ ըստ զգես-  
տաց եւ եթէ ըստ այլոց պարագայից :

### ՀՐՈՎԱՐՏԱԿ ՇՔԱՆՇԱՆԻ

Առ Ծայրագոյն Պատրիարք Սրբոյ էջմիածնի եւ Կաթուղիկոս  
Ամենայն Հայոց Գէորգ

« Ի հաւատքս մտերմութեան մերոյ առ Աղջն Հայաստանեայց,  
« որ ընտրեացն զեղ ի Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթուղիկոս Ա-  
« մենայն Հայոց, որպէս եւ ի նշան մերումս առ Զեղ սեփական եւ ա-  
« ռանձին բարեհաճութեան, համակցորդ առնեմք զեղ ի կայսերա-  
« կան ասպետութեան Սուրբ եւ բարեպաշտ Մեծի Դքսի Աղեքսանդրի  
« Նեվացւոյ, զորոյ զնշանակսն առաքելով ընդ սմին՝ մնամք Զեղ  
« կայսերական Մերովս չնորհիւ բարեացակառ

### ԱՂԵՔՍԱՆԴՐ

Տուեալ եւ այլն :

Յետ առնլոյ Հոգեւոր Տեառն զհանգիստ սակաւ ինչ, զնաց եւ  
վճարեաց ընդ Զինովիէլի զիոնագարձ այցելութիւնս առ իշխան Օր-  
ողելեանի (վրացի), առ լեհազգի Առլուսկի նահանգապետ Տիֆեաց,  
առ բարոն Նիկոլայի (գերմանացի), կառավարիչ գլխաւոր կառավա-  
րութեան Կովկասեան Փոխարքայութեան (ըստ քաղաքականի), եւ  
առ զօրապետ Կարցով, օգնական Փոխարքայի եւ գլխաւոր կառավա-  
րիչ զինուորական գործոց Կովկասու, եւ վերապարձաւ ի վանս փո-  
խարքայական կառոք :

Իսկ ի 11-ն ամսոյ յԱւագ Երեքարթւոջ զմիջաւուրբ եկն Միքա-  
յէլ Մեծ Դուքս փոխարքայ եւ վճարեաց զիոնագարձ այցելութիւն  
իւր առ Վեհ Հայրապետ՝ առանց զեկուցանելոյ կանխաւ : Եւ յետ տե-

սակցելոյ եւ ընկալնլոյ զարժանաւոր յարգանս, յորժամ կամէր վերադառնալ, Հոգեւոր Տէր տարաւ զնա ի Ս. Եկեղեցի, ուր կատարեաց զյատուկ մաղթանս արտաքոյ ի սովորական ցուցակ վասն Կայսեր Ռուսաց եւ վասն Փոխարքայի շքեղ իմն հանդիսիւ, ափ յափոյ տեսեալ զկարեւոր պատրաստութիւնս :

Եւ զի նուիրական աւուրք էին Աւագ շաբաթու եւ Ս. Զատկի, ոչ եւ Հոգեւոր Տէր զայցելութիւն ումեք, ոչ ել արտաքս ի վանաց, ըստ պատշաճի էջ ի Ս. Եկեղեցի սկսեալ յօրէ Աւագ Հինգշաբաթու, եւ ներկայութեամբ իւրով եթէ փառաւորեաց զհանդէսս եւ զարարողութիւնս եւ եթէ մխիթարեաց զժողովուրդ, որ անխափան փութայր յաճախէր յԵկեղեցի այնչափ, մինչեւ ոչ դտանել զտեղի յԵկեղեցտոջ եւ յընդարձակ բակի վանաց : Դժուարութիւն մեծ էր եւ եկեղեցականաց յերթեւեկելն յԵկեղեցի :

Կատարեաւ զտօն Ս. Յարութեան մեծահանդէս փառաւորութեամբ եւ սրտաշարժ երդեցողութեամք, ընկալաւ Վեհ. Հայրապետ յիւր ներկայութիւն զինի աւարտման Ս. Պատարագի զեպիսկոպոսունս, զվարդապետս, զաւագ քահանանայս, զնշանաւոր հայազգիս, զպաշտօնեայս զինուրականս եւ քաղաքականս ի Հայոց, ի Ռուսաց եւ ի Վրաց, զներկայացուցիչս արհեստապետաց եւ արհեստաւորաց եւ ամենայն դասու ժողովրդեան, եւ զդպրոցական եւ զկրթական պաշտօնեայս, որոց չնորհաւորեաց զՍ. Զատիկի հանդերձ բարեմաղթութեամբք ըստ իւրաքանչիւր աստիճանաց, կարգի եւ արժանեաց, եւ օրհնեալ զնոսա զամենեսին՝ արձակեաց վայելել ըստ կարգի եւ ըստ տեղական սովորութեան զանդանն, զոր ետ պատրաստել Տ. Մակար Արքեպոս ., եւ ըմպէին զգինիս վասն կենաց Հոգեւոր Տեառն, վասն կայսեր եւ Փոխարքայի եւ վասն այլոց : Եւ ապա երթային յիւրաքանչիւր բնակարանս կամ շրջէին ի Զատկական չնորհաւորութիւնս եւ մասնակցէին կեցցէից գինիօք եւ շամպանեայիւք, զոր համարեմք սովորութիւն աննախանձելի եւ վնասակար :

Եետ այսորիկ զմիջաւուրբ ի նմին իսկ աւուր զնաց Վեհ. Հայրապետն ի չնորհաւորել զՍ. Զատիկ Մեծ հշիսան Փոխարքային կովկասու : Ի յաջորդ աւուր ի Մեռելոցի Զատկի, ի 17-ն Ապրիլի կատարեալ զմեծահանդէս մաղթանս առթիւ տարեգարձի ծննդեան Օզոստ . կայսեր Ռուսաց Աղեքսանդրի, ընկալաւ եւ մեծարեաց զհրաւէր Փոխարքայի եւ մասնակցեցաւ պաշտօնական ընթրեաց ի պալատան Մեծ հշիսանի ի պատիւ կայսեր ընդ Մակար եւ Սարգիս Արքեպիսկոպոսաց, ընդ Յովհաննէս Եպ . Ռշտունուոյ Առաջնորդ կարուց եւ ընդ Խորէն վարդ . Գալֆայեան : Ըստ սովորութեան ներկայ էին յընթրիսդ բա-

զում պաշտօնեայք նշանաւորք եւ բարձրաստիճանք ի զինուորականաց եւ ի քաղաքականաց :

Ի 19-Ն Ապրիլի փոխանակեաց Մեծ Իշխան Փոխարքայն զշնորհաւորութիւն Զատկական առ Վեհ Հայրապետ :

Նորին Սրբութիւն նախ քան զմեկնեն ի Տփիսեաց, գնաց յատկապէս առ Մեծ Իշխան փոխարքայ ի 22-Ն Ապրիլ ամսոյ յաւոր շաբաթու, եւ խօսեցաւ ընդ նմա եւ ինդրեաց օգնել ինքեան սակս վերաքըննութեան Պալաժէնիոյ 1836-ի, յարգել զազատութիւնս իւր եւ զիրաւունս սակս յարաբերութեանց որ ընդ արտաքին աշխարհաց եւ անձանց, միանդամայն յաղագս վարչութեան կամ կառավարութեան Ս. Էջմիածնի եւ վիճակաց Ռուսաստանեայց եւ ընդ Առաջնորդաց :

Խոստացաւ Փոխարքայն զկատարեալ բարեկամութիւն եւ զօդնութիւն համաձայն խնդրանաց Նորին Սրբութեան յամենայնի եւ ըստ ամենայնի, յաւելեալ միանդամայն, զի ի դիմաց ոռւսական կառավարութեան չիք արգել ինչ ընդ վերաքննութիւն Պալաժէնիոյ, ընդ ազատ յարաբերութիւնս կաթուղիկոսականս եւ ընդ կատարումն վարչական պարտաւորութեանց: Ընդ որ մեծապէս ուրախացաւ Հոգեւոր Տէր լիայոյս ակնկալութեամբք, մանաւանդ զի խոստմունքն այնոքիկ համաձայնեալ ընդ բանից դեսպանին կ. Պոլսոյ Պ. Իկնաթիէվի՝ ներշնչէին Նորին Սրբութեան զկատարեալ վատահութիւնս մինչեւ կարծել բացարձակապէս անկեղծ եւ արդար լինել ոռւսական դիւանագիտութեան եւ կառավարութեան:

Փոխարքայ Միքայէլ Մեծ Դուքս հնարիւք իմն ձեւացուցեալ զբարեպաշտութիւն՝ աղաչէր զշոգեւոր Տէր առնուլ ընդ փոյթ զօծումն կաթուղիկոսական, եւ յաւելոյր յայտնել զիափաք անձամբ ներկայ եւ ականատես լինել հանդիսի եւ արարողութեան օծման: Եւ Հոգեւոր Տէր խորին իմն միամտութեամբ հրաւիրէր զնա ի Ս. Էջմիածին, պատուել իւրով ներկայութեամբ զհանդէմն օծման եւ զշայս եւ այլն, ոչ իմացեալ զիսկական միտո Նորին Կայսերական Բարձրութեան:

Ի 22-Ն ամսոյ յաւուր Նոր - Կիւրակէի ետ Մեծ Իշխան փոխարքայ ընդ երէկս զտասաներորդ ժամու ի նորոյ զյատուկ ընթրիս հրապուրիչս ի պատիւ Վեհ Հայրապետի, հրաւիրեալ զՄարգիս եւ զՄակար Արքեպիսկոպոսունս, զՊետրոս, Յովհաննէս, Սիմէոն, Ստեփան, Խորէն եւ զԳրիգոր (Մուշեղեան) վարդապետս, զպարոնայս Մաղաքիս եւ Յակոբիկ, զԶինովիէվ զօրապետ, եւ զբաղմաթիւ պաշտօնեայս առաջնակարգս եւ զնշանաւորս ի Հայազգեաց, ի Ռուսաց, ի Վըրաց, ի Լեհաց եւ ի Պարսից: Ի ժամ ընթրեաց նուազէին պարբերա-

բար արքունական զինուորական նուազածուք : Կենացք թնդացուցանէին զմեծ սրահն ընդունելութեան փոխարքայական պալատան :

Համեմատեալ զննթրիսդ ընդ իշխանական ընթրեաց Օսմանցւոց, ըստ զինեաց եւ արքեցութեան ծանրանայր առաւելութիւնն կամ գերազանցութիւն ի կողմն ոռուսաց, իսկ ըստ տեսական եւ քանակութեան կերակրոց, խմորեղինաց, անուշեղինաց եւ պտղոց, ընդ մաքրութեան ձանրանայր գերազանցութիւնն ի կողմն Օսմանցւոց :

Թողցուք զայս :

Եկն ժամանակ բարեպատեհ այցելելոյ եկեղեցեաց եւ դպրոցաց Հայոց : Վասն որոյ ի 24-ն ամսոյն յաջակողմն Կուռ գետոյ, եւ ի 25 Ապրիլի ի ձախակողմն այցելեաց Վեհ . Հայրապետ Ս. Եկեղեցեաց, Ներսիսեան Դպրանոցի եւ այլոց ծխական դպրոցաց Հայոց ի Մոռնի, ի Հաւլաբար, եւ յայլ տեղիս : Ուղեկցէին Նորին Սրբութեան Տ. Մակար եւ Սարդիկս Արքեպիսկոպոսունք, վարդապետք, աւագ քահանայք, եւ անձինք ոմանք պատուաւորք ի Հայոց, հոգաբարձուք, երէցիոփանք, որպիսիք ըստ անձնիւր եկեղեցւոյն եկեալ ի ծխական եկեղեցիս եւ ի դպրոցս՝ զիմաւորէին զՀոգեւոր Տէր ըստ արժանաւորն կարգի եւ յարգամիր ընդունելութեամբք :

Տեսեալ զանյարմարութիւնս ինչ, զփոշիս եւ զանմաքրութիւնս յոմանս եկեղեցիս եւ սեղանս մանաւանդ՝ վշտացաւ Վեհ . Հայրապետ եւ պատուիրեաց զգուշանալ, միանգամայն արգելուլ ժամարար - պատարագիչ քահանայից երթալ եւ ննջել յանձնիւր տունս յաւուրս ժամարարութեան, շինել փութով զժամարարատունս ի բակս եկեղեցեաց, կարգել զհերթակալութիւնս հանդերձ այլովքն : Հրամայեաց բազմապատկել զծխական դպրոցս ի պէտս երկուց սեռից յարտաքին սրահս (բակ) կամ առընթեր եկեղեցեաց իւրաքանչիւրոց եթէ ի քաղքի եւ եթէ ի համայն վիճակի :

Հաւանեցաւ յոյժ ընդ կրթական մասն Ներսիսեան Դպրանոցի վերակազմելոյ:

Համաձայն իննդրանաց եւ հրաւիրանաց Մեծ Իշխան Փոխարքայի ի 26 եւ ի 27-ն Ապրիլի յաւուր Զորեքաբաթու եւ Հինգաբաթու գնաց Վեհ . Հայրապետ յայցելութիւնս արքունական դպրոցաց երկուց սեռից, վարժարանաց եւ կիսավարժարանաց (զիմնազիա եւ պրոգիմնազիա), Նունեան օրիորդաց վարժարանի գտանելոյ ընդ պաշտպանութեամբ փոխարքայուհոյ, ոմանց նշանաւոր հաստատութեանց (զինարանի, թնդանօթարանի), եւ Սիօն անուանեալ աւագ եկեղեցւոյ ոռուսաց՝ առանց հանդիպելոյ ոռուսական եպիսկոպոսի :

Ոչ գտաւ գոհացուցիչ ըհայ աղդի աշակերտս եւ զուսանողս ի պետական վարժարանս ի կրօնական ուսմունս եւ ի մայրենի լեզուոջ։ Այս առթիւ եւ ըստ թելադրութեան Փոխարքայի ջան կալաւ Եղեմիա զօրավար Արծրունի (Հայր Գրիգոր եւ Անդրէաս Արծրունոյ) համոզել զեկն է։ Հայրապետ, որ եւ նուիրեաց զտարեկան գումարս հինգ հարիւրական (500) ռուբլեաց ի նպաստ Նունեան վարժարանի առ ի կրթել զերկուս հայուճիս։ Ասէր Արծրունի, զի ոչ է պարտ խնայել զհաւ՝ ուստի գայ սագ (գազ կէլէն եկրտէն՝ քառակ էսերկնմէզ)։ Սիրէր եւ պատուէր Հոգեւոր Տէր զԱրծրունին, եւ ակամայ կամօք կատարեաց զառաջարկութիւն նորա։ Զամս ինչ վճարեաց վիճակն Տփիւեաց զայս գումար իբր ի տուգանս առանց առնլոյ գէթ զչնչին փոխարինութիւն։

Հարկ է յաւելու աստանօր եւ արձանագրել, զի Միքայէլ Մեծ Իշխան ի տեսակցութիւնս յարմարէր զբանսն եւ յայտնէր գդժգոհութիւնս զՄակար Արքեպիսկոպոսէ եւ զձեռնասուն աշակերտէ նորա զՄուքիս Արեղայէ Պարզեանց, իբր զի միանան ընդ հայ երիտասարդս ոչ բարեմիտս եւ խրախուսեն զնոսա ի հակառակութիւնս ընդ դէմ ռուսական կառավարութեան։ Պախարակէր զդպրանոցն Ներսիսեան եւ զուղղութիւն նորա։ Փափաքէր, զի հեռանային Տ. Մակար Արքեպսու։ Եւ Սուքիս Արեղայ ի Տփիւեաց։

Եւ ի միւսէ կողմանէ Տ. Մարգիս Արքեպսու։ Եւ կուսակիցք իւր գրգուէին զժողովուրդ ընդ դէմ Տ. Մակար Արք. իւրիւրէին զամբաստանութիւնս եւ ջանային յուղել զխոսվութիւնս։ Թողցուք յիշել զյանախտեղաց զանստորագիր նամականի։ Այլ ի նանիր վաստակէին՝ անհիմն լեալ ըստ բազում մասանց, բաց ի չափազանց յանդընութեանց Սուքիսասայ Արեղայի, զոր սիրէր կենսագիրս։

Մարգիս Արք. կեղծէր զիկշտ եւ զարտասուս, իբր զի Մակար Արք. առուեալ է ծեփել զյիշատակարն իւր որ ի ճակատու վեհարանի, եւ զի իբր ինքն Զալալեան շինեալ էր ամբողջութեամբ եւ ի հիմանէ զվեհարան - առաջնորդարան վանուցդ, մինչ նա փակեալ յառաջոյ զընդարձակ դստիկոն զպալքնամեւ սրահ վերնայարկի որ յերկարութիւն շինուածոյ յարեւմտից կուսէ՝ կազմեալ է զմի սենեակ ի վերայ կուռ զետոյ, զընդարձակ սրահ (սովա) եւ զնախասենեակ մտից դրան կից առանձին զանգակատան Եկեղեցւոյ։ Ուստի սխալ էր եւ աւելորդարանութիւն պարունակութիւն յիշատակարանի։

Իսկ Վեհ։ Հայրապետ ոչ հաւանէր առնել զփոփոխութիւն ինչ, խոստանայր դիտել եւ քննել առժամս, փորձել եւ ըստ այնմ տնօրինել զարժանն յապագային։ Մանաւանդ յարգէր զՄակար Արք. եւ զիտ-

ՀԵՄՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ : Միանդամայն զգուշացոյց զՃ . Մակար Արք . Եւ զՍՈՒՔԲԻԱՍ Աբեղայ եւ պատուիրեաց վերջնոյն հեռանալ ի գրգռութեանց եւ յերիտասարդական անփորձութեանց , եւ խոստացաւ տալ նմա զառանձին ասպարէզ գործունէութեան յայլում վիճակամասի , եւ այսու ըստ մասնեայ շահել եւ զսիրտ Փոխարքայի :

Ոչ դադարէր Զալալեան ընդ արժանաւոր արբանեակի իւրում Նիկողայոսի Յովսէփեան Աշտարակեցւոյ թարգմանի Սինոդի , զորպիսի պաշտօն վարէր վերջինն առընթեր Վեհ . Հայրապետի , տարածայնէր միանդամայն ի գաղտնի զգրգուիչ եւ զգայթակղեցուցիչ բանահիւտութիւնս եւ զլլապարտութիւնս ընդդէմ Հոգեւոր Տեառն եթէ բանիւ բերանոյ եւ եթէ անստորագիր կամ կեղծեալ նամակօք ի Թիֆլիզ եւ ի ճանապարհի , սկսեալ ի Կ . Պոլսոյ , որպէս համառօտեցաք այլուր :

Համբերութեամբ մեծաւ հսկէր Վեհ . Հայրապետ , հետեւել յորդորել ե՛լ շահել զամենեսին եւ բերել յուղղութիւն եւ ի կարգ :

Ոչ աւելորդ համարեսցի արձանագրել աստ եւ զբարի գործ առն ուրումն Ղարապաղցւոյ Աստուածատուր անուն , նամակացրուիչ պաշտօնեայ արքունական սուրհանդակատան Տիխեաց : Նախքան զմեկնել մեր ի Թիֆլիզէ , յաւոր միում , մինչ երգէր կենսագիրս զերգն թարեալ երբ ի մէնջ , Հայր՝ ուղղեալ յանուն Նորին Սրբութեան Վեհ . Հայրապետի Աղդիս Հայոց աստ ի Կ . Պոլիս , երեր զնամականի եւ այլն , լուսւ զոր երգէաք մեղմ ձայնիւ եւ յառանձին սենեկի որ մերձ ի նախադուռն վեհարանի , եւ զի բերեալ էր զնամակ եւ յանուն մեր , զգածեալ արտասուեաց եւ խնդրեաց տալ ինքեան զօրինակ մի : Եւ կենսագիրս ետ նմա զթերթս ինչ ի տպագրելոցն , որոց արդիւնք նուրիեալ էին ի նպաստ Ս . Փրկչեան Աղդ . Հիւանդանոցի Ետափ - Գուլէի Կ . Պոլսոյ , ընթերցաւ զերգն եւ առեալ զբացատրութիւնս՝ յայտնեաց զիղձս նուրիարեր լինելոյ , եւ յանձնեաց զմի վիճակաւոր բաժնեթուղթ ի ոռւսական ներքին փոխառութեանց՝ խնդրեալ հասուցանել ի նպաստ եւ ի նուէր Ս . Փրկչեան Աղդ . Հիւանդանոցի : Օրհնեաց Հոգեւոր Տէր զայդ բարենախանճ՝ կատարեալ եւ զիղձս նորա : Յետ ամաց ինչ շահեցաւ բաժնեթուղթն այն զՅ000 ոռւրլի (իբր 600 ոսկի Օսմանեան) , եթէ ոչ վրիպիմք ի յիշողութենէ :

### ԳԼՈՒԽ ՆԱ .

ՅԱՂԱԴՍ ՈՒՂԵՒՈՐԵԼՈՅ Ս . ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՏՓԽԵԱՑ  
ՄԻՆՁԵՒ ՑՍԲ . ԷՋՄԻԱՆԻՆ

ՓՈՂԲ ՃԵԾ ԷՐ ՎԵհ . Հայրապետի երթալ հասանել ի Ս . Էջմիածին

եւ անդէն ձեռն ի գործ արկանել, ընդ որ թելաղըէր եւ ռուսական կառավարութիւն, եւ միամտաբար հաւատայր Հոգեւոր Տէր ըղձին վերջնոյն: Ունէր եւ ինքն զներքին պատճառ:

Վասն որոյ յետ վճարելոյ Հոգեւոր Տեառն միոխաղարձ այցելութիւնս, զպաշտօնական տեսակցութիւնս եւ զընդունելութիւնս, եւ զայցելութիւնս հրաժեշտի որոց արժան եւ հարկ անհրաժեշտ էր, որպէս եւ նոքա եւ Հայք եւ այլք փութային գունդագունդ յերբայֆքարեաւ, պատրաստեցաւ ուղւոյ լինել յաւուր Հինգչարաթու ի 4-ն Մայիսի:

Էր ժամ հինգ, իբր ի միջօրէի, էջ Ս. Հայրապետ ի Ս. Եկեղեցի, աղօթեաց, օրհնեաց զժողովուրդ եւ ել յուղի կառօք ուղեկցութեամբ Արքեպիսկոպոսաց, վարդապետաց, պատուիրակ - ուղեկցացն Թուրքիոյ, աւագ քահանայից, նշանաւոր ազգայնոց, ոմանց պաշտօնէից եւ ներկայացուցչաց արքունականաց, դրօշակաւոր արհեստապետաց եւ բազմախուռն բազմութեան ժողովրդեան Հայոց:

Յետ միոյ ժամու, հասեալ մերձ ի Կրծանիս արուարձանն՝ պատուեաց նորին Սրբութիւն զնաշ զպատրաստեալն ի Հայազգի մեծամեծաց ոմանց յայգւոջ ուրեք:

Ապա, յիններորդ ժամու շարունակեաց Հոգեւոր Տէր զճանապարհ իւր եւ զտասաներորդ ժամու եհաս յիշեւանն Սողանլը, յորմէ արձակեաց զժողովուրդ իւր սիրելի, զարձեստապետու, զներկայացուցիչ եւ զնշանաւոր անձինս, զմեծամեծս Հայոց հանդերձ օրհնութեամբ եւ չնորհակալութեամբ: Ել ի ճանապարհ եւ եհաս յիշեւանն կոդայու ընդ երէկս ի մետասաներորդ ժամու, ուր եւ գիշերեաց:

Զիններորդ ժամու առաւօտեան մեկնեալ ի Կողայէ՝ զկնի միոյ ժամու եհաս Վէհ. Հայրապետ յիշեւանն Սարվան, զերկոտասաներորդ ժամու առաւօտեան յիշեւանն Մուղանլու, ուր եւ պատուեաց զնախաճաշ զպատրաստեալն ի քահանայից եւ ի Հայոց Շուլավէրու ի համանուն վիճակարաժնէ Տփխեաց, որք, որպէս եւ քահանայք եւ Հայք մերձաւոր գիտօրէից կողմանցն յիւրաքանչիւր սահմանս յարմարաւորս՝ գիմաւորեալ ուղեկցէին, գիմաւորեցին զկէհ. Հայրապետ, ըստ սոլորական կարգի, ոչ մոռացեալ զիաց եւ զալ, միանգամայն ուղեկցեցան եւ առին զօրհնութիւն Հայրապետական: Ի չորրորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ նորին Սրբութիւն ի Մուղանլուէ, զկնի միոյ ժամու եհաս յիշեւանն կոտրած կամբջոյ առ կուռ գետով յաջակողմն, ընդ երէկս զինն ժամու եկեալ յիշեւանն Սալահլու, ուր

Եւ գիշերեաց՝ պատուեալ զպատրաստութիւնս եւ զընթրիս ջերմեռանդ Հայոց որ ի Կողբացւոց եւ յայլոց գիւղօրէից ի վիճակաբաժնէն Ղաղախու (Տփխեաց), օրհնեաց զնոսս եւ անդ ազաւ զգիշերն :

Ի յաջորդ շարաթ աւուր, ի 6-ն Մայիսի, զինն եւ կէս ժամու առաւոտեան, մեկնեալ Հայրապետ ի Սալահլուէ՝ եհաս ի մետասաներորդ ժամու ի փոքրիկ իջեւանն Շուշարաք, երկոտասաներորդ ժամու յիջեւանն Աղստեւու (Ախստաֆա, ըստ գործածականին) առ Աղստեւ գետակով, յաջակողմն ի բարձրաւանդակի, ուր էառ հանգիստ իբր քառորդս երիս : Եւ ապա շարունակեալ զուղին՝ եմուստ ի մացառոտ եւ ի վտանգաւոր սահմանս Ղաղախու, եհաս զերկրորդ ժամու յիջեւանն Զալսմախլու (որ եւ Ուզունթալա), անտի զհինդ եւ կէս ժամու մերձ ի կէս օր ի գեղեցիկ եւ յօդասուն իջեւանն Քարվանսարայ գեղջ Հայոց ի լանջս անտառախիտ լերանց, ի միջավայրի զուարձալի եւ ախորժելի, կանաչազարդ եւ անտառախիտ ձորոյ եւ նեղուցի Տէլիճանի : Պատուեաց անդ զճաշ զպատրաստեալն ի բարեպաշտ Հայոց Քարվանսարայի, Սեւ Քարի, Խաչաջուրի, Ուզունթալայի եւ Աշխի, եւ օրհնեաց զնոսս : Գիշերեաց անդ Նորին Սրբութիւն՝ ախորժեալ ի Քարվանսարայէ եւ ի դըիցն :

Որպէս յամենայն տեղիս առնէր Նորին Սրբութիւն, հրաւիրեալ զքահանայս եւ զգողովուրդ ի ներկայութեան իւր՝ խօսակցէր ընդ նոսս, հարցանէր զտեղեկութիւնս ներքինս եւ արտաքինս, խրատէր և յորդորէր զնոսս յեկեղեցասիրութիւն, յուսումնասիրութիւն, ի բարեպաշտութիւն, յազգասիրութիւն եւ ի ներքին ներդաշնակութիւնս, տալով եւ զհրահանդս կարեւորս եւ զպատուէրս օդտակարս, ընդ որս ողեւորեալ Հայոց՝ ուրախ լինէին եւ միիթարէին յոյժ :

Յ7-ն Մայիսի, յաւուր Կիւրակէի, ել Վեհ . Հայրապետ զտասաներորդ ժամու առաւոտեան ի Քարվանսարայէ : Քաջ երիտասարդք Հայոց Ղաղախու որպէս յերէկի, նոյնպէս այսօր շարունակէին զքաջալարժ ձիախաղս եւ զգինաշարժութիւնս, եւ առաւել գրաւէին զհամակրութիւնս եւ զգովեստու մեր զինուորական փորձառութեամբք իւրեանց եւ կրթութեամբ յայնպիսս անձուկ վայրս եւ ի ձորուղիս, զորպիսս տեսանեմք յետ այսորիկ ի բազում տեղիս ի Հայոց, մանաւանդ ի հայաշատ վայրս, յԱրարատեան, ի Սիւնեաց աշխարհս եւ յայլս :

Ի մետասաներորդ եւ կէս ժամու հասեալ ի գետեզերեայ եւ ի զուարձատեսիլ իջեւանն Զուրաստան, որ ունէր զիսնարհագոյն դիրս ի լեռնաձորակի եւ յօձապտոյտ նեղուցի Տէլիճանու, յետ սակաւուց մեկնեցաւ եւ անտի Հոգեւոր Տէր եւ սկսաւ ուղի մեր բարձրանալ ի զառիվերս նորաշէն խճուղւոյ առ օճապտոյտ եզերք գետոյ եւ նեղու-

ցի : Զմի եւ կէս ժամու առաւօտեան եկն Հոգեւոր Տէր ի կից իջեւանն Տէլիջան գեղջ առ ստորոտով համանուն գլխաւոր դադաթան լերին , ուր ըստ սովորական կարգի հնչէր զանգակ եկեղեցւոյ , համախմբեալ էին քուհանայք եւ երգեցիկ մանկունք եւ Հայք ի նոյն գեղջէ եւ ի շրջակայիցն՝ ուղեկցեալ եւ ի ճանապարհի : Համեցաւ Հոգեւոր Տէր օրհնել անդ զճաշ զպատրաստեալն ի Գրիգոր երեցիոխանէ եկեղեցւոյ տեղոյս : Ի չորրորդ ժամու ելեալ եւ անտի ընդ ոլորապտոյտ խճուղի ճարտարաշէն՝ բարձրացաւ ի դադաթն Տէլիճանու , ուր հաստատեալ է Սէմենովկա նորաշէն գիւղ գաղթական գերմանաց (նէմէց ըստ սուսաց) , ի սահմանի նահանգացն Տփխեաց եւ Երեւանու , սկսաւ իջանել ի վայր եւ Եօթներորդ ժամու Եհաս յիջեւանն Զբուխու մերձ համանուն հայաբնակ գեղջ առ հիւսիս - արեւմտեան եղերբ Ծովուն Գեղամայ , նոյն եւ Սեւանայ անապատի : Անդ գիշերեաց Նորին Սըրբութիւն :

Ի սահմանի Երեւանայ ի դադաթան Տէլիճանու Ելին ընդ առաջ Հոգեւոր Տեանն Հայք Նոր - Պայազիտու , Զբուխլուի , Գոմածորոյ եւ այլոց մերձակայ գիւղօրէից , ընդ որս նաեւ սուս օգնական նահանգապետին Երեւանայ ընդ դաշտային սստիկանապետի :

Տ . Մկրտիչ Եպ . փոխ - թեմակալ Երեւանայ , Հայր եւ միաբանք Անապատի Սեւանայ , Ստեփան արեղայ Մխիթարեան Աղեքսանդրապուցի քարոզիչ - գործակալ Վիճակաբաժնին Նոր - Պայազիտու եւ այլ վարդապետք ոմանք եւ քահանայք միացեալ ընդ Հոգեւոր Հանդիսի գեղջն Զբուխուի , եւ առաջի իջեւանի , դիմաւորեցին զվեհ . Հայրապետ խորին յարգանօք եւ երգովք շարականաց :

Եթէ ոչ լինէր Ծովակն Սեւանայ , դիւրատեսիլ համարէաք զվայրն իջեւանի եւ շրջակայ շղթայս լերանց Ծաղկաձորոյ - Գեղարքունուոյ :

Յջն Մայիսի զմետասաններորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ Վեհ . Հայրապետ ի Զբուխլուէ եւ օգնութեամբ Հայոց անցեալ ընդ վտանգաւոր ճանապարհն Ելեւէջաւոր եւ ոլորուն առ Ծովակաւ , Եհաս ի ծովեղերեայ իջեւանն Ելէնովկա գեղջ մալտկանաց հանդէպ անապատի , յառաջին ժամու , եւ յերրորդ ժամու՝ յիջեւանն Ներփին - Ախտա գեղջ , ուր եւ ճաշեաց : Զեօթներորդ ժամու ել յուղի , յութերորդ ժամու Եհաս յիջեւանն Յամաֆեալ - Աղբիւր (Սուխոյ - Փանտան) եւ ընդ երէկս ի տասաններորդ ժամու Եհաս յիջեւանն Եղունարք , ուր եւ գիշերեաց :

Ի նորոյ այլ իմն խումբ Հայոց եւ քահանայք ի Նոր - Պայազիտէ եւ ի վիճակաբաժնէ , Հայք Ալափարսու , ծաղկաձորեցիք , ցամաքաբերդացիք եւ գոմածորեցիք (առ ծովակաւ) , չէրջէրցիք , չէրիսցիք ,

թթմաշէնցիք, բղնեցիք, սոլակեցիք (կամ ցոլակեցիք), քաղսեցիք, աղբարացիք, փառնեջեցիք, մաքրավանքցիք, ուղնդամալցիք, թայ-չարուխցիք, պապաքիչեցիք, Փարչեցիք, եւ այլն, եւ այլն, խուռնե-րամ բազմութեամբ դիմաւորէին զվեհ. Հայրապետ, մեծաւ ոգեւո-րութեամբ եւ խնդութեամբք լցեալ, քաջութեամբք եւ ձիավարժու-թեամբք իւրեանց յաւելուին մեզ զմիթարութիւն ոչ սակաւ: Կայ-տառ եւ եռանդուն երիտասարդք եւ քաջափորձք մըցէին ընդ միմեանս իրբեւ զմարտիկս, թէպէտ հանէին կազմէին եւ զփոշեղէն ամպս յեր-կինս եւ յաճախ գողցես ծածկէաք ընդ փոշիօք:

Եր 9 Մայիսի, յաւուր Երեքշարաթու մեկնեցաւ Վեհ. Հայրապետ յեղունարքէ զերկրորդ ժամու առաւոտեան: Անցեալ ընդ լեռնային ճանապարհու եհաս յերբորդ ժամու յիշեւանն Քանաքըր, որ իւ Քանակերտ) զեղջ Հայոց, ուր կազմեալ էին Հայք զհանդէս ե-կեղեցական, մատուցեալ եւ զաղ եւ զիաց: Անտի սկսաւ իշանել ի վայր ի քաղաքն Երեւան ուղեկցութեամբ բազմախուռն ժողովրդեան Հայոց Երեւանայ եւ մերձակայ գիւղօրէից, որոց աղաղակք պատռէին զօդս ի ձայն կեցցէից, որպէս առնէին յամենայն տեղիս, ուր Հայք դիմա-ւորէին եւ ուղեկցէին Նորին Սրբութեան՝ ի սկզբան Երիցս մի զկնի միոյ գոռացեալ միահամուռ եւ միաբերան՝ «Կեցցէ՛ Վեհափառ Տեր մեր»: Եւ Ս. Հայրապետ խաչակնքեալ օրհնէր զնոսա՝ զժողովուրդ իւր սիրելի:

Եր ժամ իբր 4, եմուտ Հոգեւոր Տէր ի քաղաքն Երեւան, եհաս ի հրապարակ քաղաքի մերձ ի վանս Ս. Սարդսի, ուր կազմեալ էր հան-դէս մեծ եւ թափօր եկեղեցական: Անդ իջեալ Նորին Սրբութիւն ի կա-ռուց՝ էառ զշուրջառ ի թիկունս եւ զիսաչ եւ զգաւազան ի ձեռս ընդ ամպհովանեաւ, եւ ի ձայն Երդոց շարականաց անցեալ ի միջոյ բազ-մախուռն ժողովրդեան, որք զժուարացուցանէին զդնացս թափօրի, եմուտ ի Ս. Սարդիս եկեղեցի վանաց – Առաջնորդարանի: Յետ սո-վորական ազօթից, լուսաւ Հոգեւոր Տէր զուղերձ փոխ – թեմակա/Մկրտիչ Եպ –ի Բարամեանց Երեւանցւոյ, եւ ի պատասխանի խօսե-ցաւ զյորդորական համառօտ, օրհնեաց զժողովուրդ հանդերձ չնոր-ցակալութեամբ սակս բարեպաշտութեանց եւ կրօնասէր զգացմանց նորա, յաւել ասել զՊահպանիչ եւ զՀայր Մեր, եւ այսպէս կնքեաց զհանդէսս զայս:

Եւ յեկեղեցւոյ ըստ սովորական կարդի հանդերձ ուղեկցօք եւ այ-լովք եւ եմուտ ի հանդիպակաց վանս – Առաջնորդարան, ուր փութա-ցին անմիջապէս գալ եւ ներկայանալ Նորին Սրբութեան Հայք նշա-նաւորք, զլսաւոր պաշտօնեայք ներքինք եւ արտաքինք, ընդ որս

Աստաֆիէլ սուս նահանգապետ Երեւանայ, կառավարիչն ժանդարմ անուաննեալ տուանձին լրտեսաւկան եւ ոստիկանական վարչութեան, բերդապետն եւ այլք, եւ շնորհաւորեալ զգալուստ Ս. Հայրապետի առին զօրհնութիւն եւ վերադարձան յիւրաքանչիւր բնակարանս։ Եւ այսպէս շարունակէին եւ յաջորդէին միմնանց այցելութիւնք։

Յառաջին երեկոյին ԴՀ. աւուր ի 10-ն Մայիսի փութացեալ եկին ի Մայր Աթոռոյ Տեղակալ (Ատենապետի Սինոդի եւ ոչ Տեղապահ Կաթողիկոսական) Տ. Գէորգ Արք. Վեհապետեան եւ անդամք Սինոդի Յովհաննէս Արսլանեան Վաղարշապատցի եւ Գէորգ Մկրտիչեան երեւանցի Եպիսկոպոսունք, եւ Գիլոննեալ եւ վերարեալ ներկայացան վեհ։ Հայրապետի եւ մատուցին զշնորհաւորութիւնս եւ վյարդանս իւրեանց, միանդամայն վայելեցին զպատիւս նորին Մրրութեան։

Յետ առնլոյ զկարեւոր հրահանգս եւ զպատուէրս նորին Մրրութեան՝ ի նմին աւուր ընդ երէկս վերադարձան Տեղակալ եւ անդամք Սինոդի ի Ս. Էջմիածին առ ի տնօրինել զոր լուան եւ զոր հարկ էր ի դիմաւորելն զՍ. Կաթուղիկոս։

Իսկ Հոգեւոր Տէր ի ԴՀ. եւ ի ԵՀ. աւուրս (Մայիս 10 - 11) հաճցաւ չըջել եւ երթաւ յայցելութիւնս եկեղեցեաց Հայոց, Հոգեւոր դպրանոցի, ի փոխադարձ այցելութիւն նահանգապետի, Արսէն Սուլթանի Գեղամեանց եւ Պ. Ղահրամանի Աղամալեանց սիրելոյն ի հին զարմից Հայոց եւ յիշխանական դասակարգէ, եւ ի վերադառնալն աւանդեաց Մկրտիչ Եպ. - ի զկարեւոր պատուէրս զեկեղեցեաց եւ ըստ զպրոցաց — թոյլ էր Մկրտիչ Եպ. եւ ապիկար ի վարչականի։

Պատրաստեցաւ Վեհ։ Հայրապետ յաւուր Ուրբաթու ի 12-ն Մայիսի երթաւ հասանել յլթու իւր Հայրապետական ի Ս. Էջմիածին։

Զերկրորդ ժամու առաւտեան ել յուղի ընդ համայն ճանապարհորդակցաց եւ խուռն բազմութեան Հայոց Երեւանայ եւ մերձակայ պիւղօրէից՝ կաղմեալ ուղեւորական թափօր փառաւոր եւ սրտաշարժ հանդոյն հանդիսի դալստեան Տեառն ի Ս. Երուսաղէմ։ Քաջ երիտասարդք Հայոց վառեալ յաշխոյժ մեծ փորձէին յաջողակութեամբք զծիարշաւս, զգինախաղս, զձիախաղս ուազմականս եւ զայլս այսպիսիս, եւ բուռն եռանդեամբ մրցէին, թնդացուցանէին զօղս հրացանաձգութեամբք՝ բարձրացուցեալ զթանձր ամպս փոշեաց։ Գողցես ոչ բաւէին զգրդիւնք եւ փոշիք բաղմութեան կառաց եւ հանդարտ ձիաւորելոց։

Բարախէին սիրտք մեր եւ յուղէին սիրտք ընդ տես քաջութեանց եւ եռանդեան Հայոց, մանաւանդ ընդ նշմարումն կաթուղիկէի Ս.

իջմիածնի, զոր տեսաք կարօտակէց եւ արտասուալից աչօք ի հեռուստ յետ միոյ ժամու ի սահմանոյ Ս. Հռիփսիմէի վանուց : Ոչ յադէաք ի դիտելոյ եւ զՄասիս, զորոյ զգազաթ տեսաք զառաջինն յիշեւանէն Եղունարք գեղջ : Եւ անդէն ներշնչեցաք ուղղել զբանաստեղծական իղձ չափաւոր :

Եհաս Հոգեւոր Տէր ի հրապարակ որ առաջի հիւսիսային մեծ ի դրան պարսպի Մայրավանուց, ուր կազմ եւ պատրաստ մնայր եկեղեցական թափոր մեծ եւ վեհաշուր ընդ Հայրապետական Ամպհովանուոյ . համախմբեալ էր եւ ամենահոծ բազմութիւն Հայոց ի Վաղարշապատէ եւ ի վրչակայ զիւզօրէից . էջ ի կառաց մեծաւ զժուարութեամբ, հնչեցին կեցցէք, սրտագին աղաղակք բազմութեան, զըրդէին զանդակք Ս. իջմիածնի եւ Վաղարշապատու : Աւագ լուսարար Յովհաննէս Եպլ . Ասլանեան ետ զշուրջառ ի թիկունս Նորին Սրբութեան, եւ Տեղակալ Գէորգ Արք . զգաւազան եւ զիաչ ի ձեռս, եմուտ Հոգեւոր Տէր ընդ Ամպհովանեաւ, հաճեցաւ ընդ ալ եւ հաց մատուցեալ ի Միարանութէ, լուսաւ զշորհաւորական եւ զինդակցական ուղերձ Տեղակալ Արքեպիսկոպոսի, յետ որոյ հնչեցին որոտալիր երդք շարականաց եւ յառաջանայր : Բայս սովորական կարգի եմուտ Ս. Կաթուղիկոս ի մայրավանս՝ անցեալ ընդ արտաքին – պարսպային զուռն հիւսիսոյ եւ ընդ ներքին դուռն Տրդատայ անուանեալ, եւ անտի ի լուսաշող եւ ի նուրիրական Մայր Տաճար Հայաստանեայց Առաքելական Ս. Աթոռոյ : Յետ յուղեալ աղօթից առաջի Ս. Սեղանոյ Խջման՝ Նորին Սրբութիւն լուսաւ զճառ ուղերձի, որ ի դիմաց Ս. Ուխտի Համայն Միարանութեան Մայրավանուց, ողջունեաց եւ օրհնեաց զՄայր Տաճար զԱթոռ Հայաստանեայց, զՄիարանական Ուխտն Համօրէն, զՀայս եւ զներկայ ժողովուրդ հանդերձ բարեմաղթութեամբք : Ասաց զՊահպանի եւ զՀայր Մեր՝ արձակեալ ի խաղաղութիւն :

Ապա ելեալ ի Մայր Ս. Տաճարէ՝ Եհարց Հոգեւոր Տէր զտեղի տապանի Տ. Տ. Ներսէս Կաթուղիկոսի Աշտարակեցւոյ, դարձաւ ի ձախակողմն — ի հարաւակողմն զանդակատան մեծի, առ առաջին սեամբ որոյ թաղեալ էր, եւ ասաց զՀոգուց յատուկ՝ յարգեալ զնաիրեւ զեպիսկոպոսական ծնող եւ ձեռնադրող իւր : Ունէր առ նա եւ զսէր նախապաշարեալ :

Կատարեալ եւ զայս՝ սովորական ուղեկցութեամբ եպիսկոպոսաց գնաց մինչեւ ցարտաքին դուռն Վեհարանի, ընդ որ մտեալ հանդերձ ոմամբք աւագօք եւ իւրայնովք ի ներքին բակ, եւ անտի ի խոնարհագոյն զուռն Վեհարանի՝ ել եւ ի վեր ի մեծատուն Կաթուղիկոսատան, եւ առանձնացեալ յամառնային սենեակ՝ էառ հանգիստ սակաւ ինչ :

Որպէս յամենայն ուրեք ի ճանապարհորդութիւն՝ Հայք գիւղօ-  
րէից առ ճանապարհաւ Նզելոց մատուցեալ զիաց եւ զալ, եւ կազ-  
մեալ զթափօր եկեղեցական՝ դիմաւորէին զվեհ. Հայրապետ հանդերձ  
զանգահարութեամբք, նոյնպէս՝ արարին Հայք ձափարապատ, Փա-  
րաքար եւ Վաղարշապատ գիւղօրէից յիւրաքանչիւր սահմանս յերե-  
ւանայ մինչեւ ի Ս. Էջմիածին:

Ընդ երէկս հրաւիրեաց վեհ։ Հայրապետ զաւագ եպիսկոպոսունս ի վեհարան եւ եհարց ի նորոյ զողջունէ, պատուեաց զնոսա եւ խօսեցաւ ընդ նոսա զառօրեայ խնդրոց ոմանց եւ զտեղական սովորութեանց։ Խնքն հարցանէր եւ նոքա պատասխանէին։

ԳԼՈՒԽԱ ԵԲ.

ՅԱՂԱԳՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԵՒ ՎԱՍՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՑ ՈՐՄԱՑ

Հստ հնաւանդ սովորութեան Մայր Աթոռույ Ս. էջմիածնի եթէ  
ի գալստեան Ս. Կաթուղիկոսաց եւ եթէ ի վերագառնալն ի հեռաւոր  
ճանապարհորդութեանց ի Ս. էջմիածին՝ Համայն Միաբանութիւն որ-  
պէս փութեաց դիմաւորել զշոգեւոր Տէր եկեղեցական հանդիսիւ եւ  
երգովք շարականաց հոնդերձ զանգահարութեամբք, նոյնպէս ի յա-  
ջորդ աւուրս, որպէս եւ յաւուրս տօնախմբութեանց անուանց եւ տա-  
րեգարձից օծմանց Կաթուղիկոսաց, եւս եւ ի տօնի Կաթուղիէ եկե-  
ղեցւոյ Ս. էջմիածնի, առնել զշայրապետական յատուկ Մաղթանս ի  
ներքին բակի զառաջեաւ Վեհարանի: Խոկ եթէ բացակայ կամ հիւանդ  
իցէ Վեհ. Հայրապետ, կատարէ Միաբանական Ս. Ուխտն զայս Մաղ-  
թանս բոլորեալ ի քարայատակ կիսաբոլորակի զառաջեաւ մեծի զան-  
գակատան, որ յարեւմտեան կողմն Տաճարի:

Արդ՝ համաձայն այս սովորութեան ի 13-ն Մայիսի, ի Շաբաթու, յերկրորդ աւուր գալստեան Նորին Սրբութեան ի Մայր Աթոռ կատարեցաւ փառահեղ հանդէս Մադրանաց ըստ այսմ եղանակի, կցեալ եւ զպաշտօնական ներկայացմունք:

Յետ առարտման առաւտուեան ժամերգութեան, հանդիսատ առեալ իբրեւ ժամ մի, յառաջ քան զհարկանել զզանդակս ճաշու ժամու Ս. Պատարագի միանուադ հարուած մեծի զանդակի ըստ սովորութեան աղդարարեաց Միաբանից եւ այլոց փութալ համախմբել ի Մալթանս զառաջեաւ Վեհարանի ի ներքին բակի: Որոց աճապարեալ հասանել ի ներքին բակ, եպիսկոպոսունք եւ վարդապետք առեալ զվեղարս եւ զիթիլոնս, սարկաւագունք ուրարեալ, եւ դակիրք աշակերտք դպրանո-

